Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի (Ձայնագրառման ֆեմիդա համակարգի)ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-07/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» ապրիլի 2017թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ),

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Թամրազյան՝ ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

Խորեն Պետրոսյան՝ ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

Գրիգոր Գաբրիելյան՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),

Արման Հարությունյան՝ ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-07/17» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտի բացման մասին.

Հայտը բացվել է www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2017թ.-ի ապրիլի 20-ին, ժամը 12:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Գնումը իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

3. Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	**Հասցեն, հեռախոսահամարը**
«Յունիքոմփ» ՓԲԸ	ք. Երևան, Սունդուկյան 12 ա, հեռ. (010) 581111

4. Համակարգում 10.04.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

5. Տվյալներ՝ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող (Հավելված 4.1) փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Մասնակցի առաջարկած գինն է՝

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Յունիքոմփ» ՓԲԸ		
		Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	«Ֆեմիդա» ծայնագրառման համակարգ	58 550 000	11 710 000	70 260 000

8.Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2017թ. ապրիլի 25-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

9.Հանձնաժողովի քարտուղարին.

Հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Է. Տոնականյան (ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Թամրազյան (ստորագրություն)

Խ. Պետրոսյան (ստորագրություն)

Գ. Գաբրիելյան (ստորագրություն)

Ա. Հարությունյան (ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Դ. Թովմասյան (ստորագրություն)